

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԵՐՃ ՊՈՅՉԵԱՆՑԻ ԳՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԵԱՆ ԵՐԵՄՆԱՄԵԱՑ  
ՅՈՒԺԼԵԱՆՀ:

Ակն մեզ շատ մօտ ժամանակից, երբ հայ աղջը ըմբռնեց իւր գրական աշխատաւրներին տօնելու իմաստը, նա արդէն զգացել էր այն սերտ և մտերմական կապը, որը կապում է ժողովրդի հետ. Դրոյի սիրտը ժողովրդի հետ է. և ովք կարողանում է իւր սրտի բարախումը աւելի զգացնել տալ ժողովրդին և նոյն ժողովրդին լսել տալ իւր սրտի բարախումները՝ նա այդ է, որ ամենից ժողովրդականն է, նա, որը սիրում է և սիրելու ընդունակ է և այդ նա է, որը սիրուած է ժողովրդից. Արտակարտել այդ զգացումները—միշտ չի լինում. հարկաւոր է, որ առիթները լինին, իսկ այդ առիթները ստեղծւում են, քանի որ հեղինակը կենդանի է. Տօնել նրա գործունէութեան մի որոշ շրջանը լրանալու առիթով—ահա ամենավայելուց ձեւը, որով հասարակութիւնը արտավախում է այն, ինչ տարիներով թագցրած էր իւր սրտում. Եւ այսօր ահա Պոօշեանց Պերճն է, որի վրա դարձրած է ընդհանուրի ուշադրութիւնը—ականաւոր աշակերտը մեծ Արովեանի, նկարագրողը մեր ժողովրդական կեանքի—որպէս ոչ մէկ ուրիշը մեր գրականութեան մէջ, անկասկած առաջինը բռն ժողովրդական գրականութեան մէջ. Առիթը շուտով պիտի ներկաւանակ—դէմ լանդիման կանգնացնել Պոօշեանցին՝ նաև հասարակութեան առջև և ընդունել տալ սորա երախտագիտական բոլոր զգացումները. Որ այդ ցոցը կը լինի վայել վիպասանի տաղանդին և համապատասխան գրականութեան մատուցած նրա ծառալութեան չափին—ոչ մի կասկած չունինք. Ակն, ինչ հասարակութիւնը պիտի գնահատի Պոօշեանցի մէջ՝ այդ նրա զուտ ժողովրդական զաւակ լինելն է. Նրանով կարող է պարծենալ հակութիւնը, այն պատճառով, որ բոլորը, ինչ տուած է Պոօշեանցը—արդինք է մեր հողի, օդի, բռն հակական զգացումների և կրթութեան ներշնչման. Պոօշեանցը շատ և շատ քիչ է պարտական օտարին՝ մի կողմից, երևակալութեան՝ միւս կողմից. Նրան դրդող ուժը՝ հաջոենական զգացումների մտերմութիւնն է. իսկ նրա տաղանդը՝ ոչ թէ վառ և հարուստ երևակալութիւնն է, այլ

Նրա բարձր աստիճանի զգաշնութիւնը՝ հալքենական կեանքի տպաւորութիւնները ընդունելու համար, Նրա բոլոր երկերը աղդ կարգի տաղանդի ծընունդ են. երկեր, որոնց վերջինը ալսօր «Ցեցեր»-ով հայ հասարակութեան առջև է դնուում, իսկ մօտ ապագալում կ'երեւակ «Բղջի»-ն, որով Պոօշեանցի տաղանդի ծաւալը, ըստ մեզ, վերջնականապէս կ'որոշվի:

«Մուրճը» իւր կողմից արելէ և անումէ, ինչ հարկաւոր է Պոօշեանցի զօրէմանը գիտակ ցօրէն կատարելու համար: Մի կողմից նա տպում է չօրէլեարի «Ցեցերը», մի գործ, որը չատկապէս «Մուրճ»-ի համար է զրւած (և զրւած՝ զարմանալի բան, զրւած, ասում ենք ամիս ու կիսում՝ նովեմբերի սկզբից մինչ դեկտեմբերի կէսը, անցեալ 1888 թւականի): միւս կողմից՝ «Մուրճը» տևեց Պոօշեանցի վէպերի ընդարձակ քննադատութիւնը աղդ վէպերի բովանդակութեամբ միասին, «Մուրճը» գորանով կամեցաւ ծանօթացնել հայ հասարակութեան այն մարդու հետ, որին արժանաւոր կերպով տօնելու համար՝ իւր ձանը միացնում է ընդհանուրի ձանի հետ: Պոօշեանցին բոլորովին արժանի գտնելով աղդ մեծ պատվին, ցանկանում ենք որ մեր բաժանորդները և առ ընթերցողները միշտ առաջինը վիճին ընդհանուր հրաւերքին արձագանք տուղը: Յօրէլեանը կատարելու է գալ ապրիլ ամսին և աղդ օրը թող զգացվ ամնոնուրեք, որպէս հակական զրական մեծ տօն:

### ՆԵՐՍԻ ՍԵԱՆ ԴՊՐՈՑԻ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԽՆԴՐԻՆ.

#### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ.

##### Մեծ. Խմբագիր.

Մօտ օրերա ստանալով մի ժրաշան և հայ գրականութեամբ գիշեր ու ցերեկ պարապող բարեկամիցս հետեւեալ նամակը, բառ առ բառ արտագրած գրութեան էական կէտերը՝ ուղարկում եմ Ձեզ, խնդրելով տեղ տալ Ձեր նորարդողաջ ամսաթերթի մէջ: <sup>1)</sup>

...«Գիտես, Պերձ, որ Ներսիսեան դպրոցը որքան էլ մեզ դառնացնում է, ալուտ ամենաճիւ մեր լեզուն չի պատում ասելու. «և ե դի ցի տունքո քեզ աւերակ»: Մենք Նրան պարտական ենք մեր զգացմունքներից, մեր ձգտումներից ամենալաւը. աղդ անուան հետ կապւած են մեր դեղածիծաղ վիշտութիւնները, ցնորդները, լուսերը. Նրան ենք պարտական, որ սովորել ենք արհամարհել նիւթականը, կամ չը մոռանալ, որ միմիան

1) Թէպէտ բարեկամն էրաւունք չի տել ինձ հրատարակելու իւր մասնաւոր նամակը, բայց ըստ որում ինտիքը վերաբերում է ամենքի հետաքրքրութեան այդ արժանի գործին, յոյս ունիմոր կը ներէ նա ինձ ոչ միայն նամակը տպագրել, այլ և իւր անունն ևս յիշել: Դա մ'եր գրականութեան անբոնջ մշակներից մէկն է բժիշկ Միսակ Արամեանցը, որին վեճակւած է կենդրոնից հեռու Ծափառել և սըստով մօտ լինել հայ աղբայնութեան գաղափարին:

Պ. Պ.